

ՄԻ ԱՄԲԱՍՏԱՆԱԳԻՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԱԳՈՒԼԻ ՀԵՂԿՈՄԻ ԽԱՅՏԱՌԱԿ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ*

Քանալի բառեր – հեղկոմ, գավկոմ, արտակարգ հանձնաժողով, միլիցիոներ, քննիչ հանձնաժողով, բանտ, բռնագրավում, մեղադրանք, տեռորիստ, կոդոպուտ, կաշառակերություն, շահատակություն, զեղծարարություն:

Հայ-թուրքական պատերազմի ավարտական փուլում թուրք հրամանատարության աջակցությամբ ստեղծված Ալեքսանդրապոլի ռազմահեղափոխական կոմիտեն (1920 թ. նոյեմբեր–1921 թ. հունվար), որ երբեմն իրեն հորջորջել է Հայաստանի ՌՀԿ, հանդես է բերել ծայրահեղ ձախ հայացքներ ու գործելակերպ, ստորաքարշ վարքագիծ քաղաքն ու գավառը ռազմակալած թուրք հրամանատարության ու ասկյարների առջև:

Ընդհանրապես Առաջին Հանրապետության գոյության ողջ ժամանակաշրջանում Ալեքսանդրապոլ քաղաքն ու գավառը համարվել են առավել քաղաքականացած և աչքի են ընկել «ձախ» ծայրահեղական տիպի հոսանքներով ու կազմակերպություններով: ՀՀ իշխանություններին առավել ընդդիմադիր ու անհնազանդ էին քաղաքի բոլշևիկյան կոմիտեն և նրա առանձին գյուղական բջիջները: Պատահական չէր, որ հենց Ալեքսանդրապոլը դարձավ 1920 թ. Մայիսյան խռովության կենտրոնը: Այստեղ բավականին ազդեցիկ էին նաև սոցիալ-դեմոկրատական ու սոցիալիստական տիպի այլ կուսակցությունները և «ձախ» կազմակերպությունները՝ սոցիալ-դեմոկրատ մենշևիկները, «սպեցիֆիկները», Էսէռները, Անկախ սոցիալիստները, «Շիրակ» գյուղացիական միությունը և այլն: Սակայն նշվածներից իրենց հակապետական կեցվածքով առավել առանձնանում էին Ալեքսանդրապոլի բոլշևիկները:

Իհարկե, դա չի նշանակում, թե հանրապետության մյուս վայրերում բոլշևիկները վարել են չափավոր և պետականամետ գիծ: Հայտնի է, որ 1920 թ. աշնանը թուրքական մահաբեր արշավանքի տագնապալի օրերին հայ բոլշևիկները և ոչ միայն Ալեքսանդրապոլի, պարտվողական բովանդակությամբ թռուցիկներ էին տարածում զինվորների և խուճապահար ժողովրդի մեջ. «Չկրակեն, հայ աշխատավոր զինվոր, եղբայրական

* Ընդունվել է տպագրության 10.3.2015:

թուրք բանակի վրա, նա քեզ բերում է ոչ թե ստրկություն, այլ ազատություն. նա գալիս է օգնելու քեզ քո սրբազան պայքարի մեջ»¹: Հայաստանի բանակում և նրա թիկունքում բոլշևիկները գործնականում կատարում էին «5-րդ շարասյան» դեր: Այդ մասին է վկայում Հ(կ)ԲԿ Կենտկոմի 1920 թ. սեպտեմբերի 20-ին Բաքվից ուղարկված հույժ գաղտնի հրահանգը՝ ուղղված կուսակցության բոլոր կազմակերպություններին, թիկունքի և ռազմական գոտիների բոլշևիկներին, որում կոչ էր արվում. «կազմալուծել հայկական կոմիտեի բանակը բոլոր միջոցներով», «կազմակերպել դասալքություն», «չենթարկվել սպաների հրահանգներին», «արագացնել հանրապետական Հայաստանի պարտությունը» և այլն²:

Արդեն պատերազմի ավարտական փուլում՝ 1920 թ. նոյեմբերի սկզբին, Հայաստանի դրության մասին ՌԿ(Բ)Կ ԿԿ-ի Կովկասյան բյուրոյին ուղղված տեղեկագրում Հայկոմկուսի ԿԿ-ի անդամության թեկնածու Շ. Ամիրխանյանը հայտնում էր. «... հայկական զորամասերը առանց մարտի ամբողջովին անձնատուր են եղել Քեմալին, նրան ընդունելով բոլշևիկի տեղ...»³:

Բազում փաստեր լրացուցիչ կերպով համոզում են, որ թուրք-հայկական պատերազմում Հայաստանի պարտության գործում բազմաթիվ այլ պատճառների ու աննպաստ հանգամանքների թվում, անշուշտ, զգալի է եղել նաև հայ բոլշևիկների քայքայիչ ու թրքապաշտ գործունեությունը՝ բանակում և հասարակության մեջ⁴: Ասվածներից ինքնին պարզ է դառնում, թե նման հակապետական քարոզչության ու պարտվողական մթնոլորտի պայմաններում որքան ցածր պետք է լինեին դիմադրական, ինքնապաշտպանական ոգին: Հայ զինվորին և հասարակ քաղաքացուն համակած պարտվողական ոգու պատճառով էր, որ գրեթե առանց դիմադրության թշնամուն հանձնվեցին Կարսը և Ալեքսանդրապոլը:

Ալեքսանդրապոլում իրադարձությունները ընթացան հետևյալ կերպ. հոկտեմբերի 30-ին՝ Կարսի անկումից հետո, խուճապ սկսվեց Ալեքսանդրապոլում: Նոյեմբերի 2-ին թուրքական, իսկ 5-ին հայկական կողմերն իրարից անկախ հրադադարի առաջարկություն արեցին, և նոյեմբերի 7-ին քաղաքը հանձնվեց թուրքերին: Մինչ այդ՝ նոյեմբերի 4-ին, քաղաքային իշխանությունները քաղաքագլուխ Պարույր Լևոնյանի գլխավորությամբ ինքնագլուխ թողել և հեռացել էին քաղաքից: Թեև քաղաքային իշխանությունների հանդեպ հարուցվեց դատական գործ, սակայն այն մնաց անհետևանք⁵: Օգտվելով խառնաշփոթից՝ բանտից ու ընդհատակից դուրս եկան բոլշևիկները և սկսեցին ինքնակազմակերպվել: Ս. Վրացյանը փաստում է, որ, երբ թուրքական բանակը մոտեցել է Ալեքսանդրապոլին, բոլշևիկյան կոմիտեն ընդառաջ է գնացել կարմիր դրոշով, և նրանց նորակազմ հեղկոմի ներկայացուցիչ օրիորդ Նուշիկ Զավարյանը արտասանել է. «Ողջուն՝ թուրք ազատարար բանակին, որ գալիս է ազատելու մեզ դաշնականների դժոխքից»⁶:

1 Մեջբերումը ըստ՝ Նաասաթեան Վ., Հ. Յ. Գաշնակցութեան անելիքը, Գահիրե, 1924, էջ 224:

2 Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ.1022, ց.3, գ. 275, թ.1:

3 Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան ..., Եր., 1960, էջ 397:

4 Այդ մասին տես Հակոբյան Ա., 1920 թ. թուրք-հայկական պատերազմի պատմության փորձն ու դասերը., Եր., 2004:

5 Տես ՀԱԱ, ֆ. 201, ց.1, գ. 122, թ.1: «Ժողովուրդ», 24 նոյեմբերի 1920 թ.:

6 Վրացեան Ս., Խարխափումներ, Պոսթըն, 1924, էջ 83:

Անիշխանության դեմ պայքարելու և քաղաքում կարգուկանոն հաստատելու նպատակով սկզբում իշխանությունը ստանձնում է մենշևիկ-էսէռների կողմից: Քաղաքային ինքնավարությունը գլխավորում է Անկախ սոցիալիստների կուսակցության առաջնորդ, նախկին քաղաքագլուխ Լևոն Սարգսյանը⁷: Սակայն քաղաքին տիրացած թուրք զավթիչները չեն ձանաչում այդ իշխանությունը, մի քանի օր անց Լ. Սարգսյանին հեռացնում են և նախընտրում են հովանավորել իրենց շահերին ու պլաններին ավելի հոգեհարազատ տեղի բոլշևիկներին: Ստանալով թուրք հրամանատարության (Բ. Կարաբեքիրի) և ասկյարների աջակցությունը՝ բոլշևիկները քաղաքի և գավառի իշխանությունը ձևական առումով վերցնում են իրենց ձեռքը, սակայն իրականում դառնում են գործիք թուրքերի ձեռքում՝ վերջիններիս ջարդարարական ու կողոպուտի քաղաքականության իրագործման ձանապարհին:

ՌԿ(Բ)Կ և ոչ թե ՀԿ(Բ)Կ Ալեքսանդրապոլի կոմիտի նախաձեռնությամբ նոյեմբերի 13-ին քաղաքում անցկացվել է բազմամարդ միտինգ, որին մասնակցել են նաև թուրքական կոմկուսի ներկայացուցիչներ: Միտինգում ընդունվել է բանաձև, որը մեջ ենք բերում ամբողջությամբ. «Ալեքսանդրապոլի պրոլետարիատը և չքավոր գյուղացիությունը, ազատագրվելով հայկական դարավոր լծից՝ հղում է իր եղբայրական սրտագին ողջույնը թուրքական Կոմունիստական կուսակցությանը՝ Թուրքիայի ճնշված մասսաների միակ պաշտպանին: Հայաստանի հարստահարված և բազմատանջ զանգվածները վստահ են, որ միայն Հայաստանի և Թուրքիայի՝ երկու հարևան ժողովուրդների պրոլետարիատի միավորումը և ձեռք-ձեռքի տված համատեղ աշխատանքը կերաշխավորի մեծ հաղթանակի լիակատար հաջողությունը և ընչաքաղց համաշխարհային իմպերիալիզմի տապալումը:

Կեցցե՛ Թուրքիայի Կոմկուսը, կեցցե՛ Արևելքի Կարմիր հեղափոխական բանակը, կեցցե՛ կոմունիզմը, կեցցե՛ Խորհրդային Հայաստանը:

13 նոյեմբերի 1920 թ. Միտինգի նախագահ՝
ք. Ալեք-Պոլ Ար. Տեր-Սարտիրոսյան
քարտուղար՝ Մկ. Խաչիյան»⁸:

Այնուհետև, այդ նույն օրվա միտինգում ընդունվել է նաև կոչ՝ ուղղված հայ զինվորներին, գյուղացիներին և գաղթականներին. «Խմբապետներից կազմված դաշնակցականների խայտառակ կառավարության զորքը նահանջում է Քեմալի ահեղ ճնշման տակ: Բավական չէ, որ նրանք թալանի ճարակ դարձրին ժողովրդի ունեցվածքը, բավական չէ, որ նրանք դժբախտ դարձրին հայ աշխատավոր զանգվածներին, գյուղացիներ և զինվորներ, այժմ էլ նրանք խաբում են ձեզ՝ ասելով, թե թուրքերը գալիս են թալանելու և մորթելու ձեզ: Մենք կոչ ենք անում ձեզ չհավատալ դաշնակներին, քանզի գալիս են ոչ թե թալանչիներ, այլ հայ գյուղացիների, զինվորների և բանվորների ընկերները: Նրանք (թուրքերը՝ Ա.Հ.) գալիս են ոչ թե մորթելու ձեզ, այլ ազատելու դաշնակ թալանչիների ձեռքից ...»⁹: Միտինգի հաջորդ օրը՝ նոյեմբերի 14-ին, ՌԿ(Բ)Կ Ալեքպոլի կազմակերպությունը կո-

⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ.1022, ց. 2, գ. 189, թ.3-4:

⁸ ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 189, թ. 1:

⁹ Նույն տեղում, թ. 2:

միտեի անդամներ Ներսիկի, Արծվիկի և Նուշիկի ստորագրությամբ հրապարակել է թուրքասիրական մեկ այլ կոչ, որում մասնավորապես ասվում էր. «Մենք (հայ բոլշևիկները- Ա.Հ.) լիակատար լեզու ենք գտել մեր դաշնակից հեղափոխական թուրքական բանակի հետ և մեր գործողությունները համաձայնեցված են»¹⁰:

Նման կոչերի հետևանքով էր, որ քաղաքի ու գավառի հայ բնակչությունը հիմնականում մնաց տեղում և շատ շուտով դարձավ թուրքական զանգվածային կոտորածների ու կողոպուտի օբյեկտ: Ավելին, ասկյարները չէին խնայում անգամ իրենց «բարեկամ» հայ կոմունիստներին: Իսկ մինչ այդ թուրքերի օգնությամբ Ալեքսանդրապոլում ստեղծվում է Հեղկոմ, և նրանց հովանավորությամբ **նոյեմբերի 17-ին** Ալեքսանդրապոլի գավառում հռչակվում է խորհրդային իշխանություն:

Մեր ձեռքի տակ առկա է մի փաստաթուղթ, որը վեր է հանում, թե ինչպիսի չարագործություններ են կատարել Ալեքսանդրապոլի հեղկոմը, իսկ ապա՝ գավառային կոմիտեն (գավկոմը), իհարկե, մեծիմասամբ թուրքերի թելադրանքով, ինչը նրանց չի ազատում հանցակից դառնալու խայտառակությունից:

Խոսքը վերաբերում է 1920 թ. դեկտեմբերի երկրորդ կեսից հատուկ հանձնարարությամբ Ալեքսանդրապոլ գործուղված ՀՍԽՀ Արտակարգ հանձնաժողովի (Հայչեկայի) նախագահի տեղակալ **Հայկ Ամատունու** 1921 թ. հուլիսի 4-ի ամսաթվով ներքին գործերի կոմիսար Պողոս Մակինցյանին հասցեագրված զեկուցագրին: Հանրապետության թիվ 2 չեկիստը բանտում գրված այս զեկուցման մեջ հատուկ անդրադարձել է Ալեք-պոլի հեղկոմի, գավկոմի, դրանց առանձին ղեկավարների՝ խաղաղ բնակչության նկատմամբ գործադրած բռնությունների, շահատակությունների, զեղծարարությունների, մատնությունների, կաշառակերության ու կողոպուտների փաստերին:

Այս փաստաթղթից պարզվում է, որ թուրք հրամանատարությանը մի ավելորդ անգամ իրենց հավատարմությունը ցույց տալու, նոր տերերին լավ ծառայելու, ինչպես նաև հարկ եղած դեպքում ժողովրդի հաշվին հարստանալու նպատակով Հեղկոմը և հեղկոմականները բազում սև ու մուր զորքեր են կատարել: Հավանաբար իրենց կատարած հանցանքների հետքերը կոծկելու համար նրանք երկար ժամանակով քաղաքի չեկայի բանտում բանտարկել են տվել այդ փաստերին քաջածանոթ և քննիչ հանձնաժողով ստեղծելու պահանջով հանդես եկող չեկիստ Հ. Ամատունու: Ուստի վերջինս բանտից 1921 թ. հուլիսի 4-ի ամսաթվով գաղտնի զեկուցում է գրել՝ հասցեագրված Խորհրդային Հայաստանի ն. գ. կոմիսար Պ. Մակինցյանին: Փաստաթուղթը թերևս գաղտնի ձանապարհով կոմիսարիատ է հասել 1921 թ. հուլիսի 13-ին, որովհետև առաջին էջի վերևի ձախ անկյունում շտամպով մակնշված է թիվ 1897, 1921 թ. հուլիսի 13:

Ցավոք, սույն գործի հետ կապված այլ նյութերի բացակայության պատճառով մեզ հայտնի չէ՝ այս ամբաստանագրի հիման վրա քրեական գործ հարուցվել է, թե ոչ, և եթե այո, ապա ինչ ընթացք է այն ստացել: Սակայն մեր ձեռքի տակ եղած մի շարք անուղղակի վկայություններից կարելի է

¹⁰ Նույն տեղում, թ. 4:

եզրակացնել, որ Ալեքսանդրապոլի հեղկոմի և գավկոմի առանձին անդամներ հետագայում էլ շարունակել են տարբեր պաշտոններ վարել, ինչպես, օրինակ, հայտնի մարքսիստ Ն. Ստեփանյանը, Գևորգ Գեղունին, Զ. Աշրաֆյանը, Ա. Արշարունին և ուրիշներ: Անկախ նշված գործի հետ կապված դատաքրեական հետապնդումից, սույն փաստաթուղթն արժեքավոր է նրանով, որ ցույց է տալիս, թե իրենց «բարեկամ» և «հայ ժողովրդի ազատարար» թուրքերի հովանու ներքո ինչպիսի ապօրինություններ են գործել Ալեք-պոլի հեղկոմն ու գավկոմը և ապա փորձել են կոծկել իրենց հանցանքի հետքերը:

Ուշագրավ է, որ Ալեք-պոլի բոլշևիկյան գավառային կոմիտեն իրեն համարել է ոչ թե Հայկոմկուսի (ՀԿ(բ)Կ), այլ Ռուսաստանի կոմկուսի (ՌԿ(բ)Կ) կազմակերպություն, այսինքն՝ իրեն դիտել է Հայկոմկուսից մեկուսի, առանձնացված: Հավանաբար, մի կողմից՝ որպեսզի դրանով ավելի ընդգծի իր նվիրվածությունը ռուսական բոլշևիզմին, իսկ մյուս կողմից՝ ավելի դուր գա ու վստահելի լինի թուրքերին, քանի որ, ինչպես թուրքերն էին հայտարարում, իրենք չեն վստահում հայ բոլշևիկներին: Այդպիսով, թուրքերի դերակատարությունը նշանակալի եղավ գավառում հեղկոմ ստեղծելու և խորհրդային իշխանություն հռչակելու գործում:

Ուշագրավ է նաև, որ ստեղծված հեղկոմը կոչեցին ոչ թե Ալեքսանդրապոլի գավառային, այլ **Հայաստանի հեղկոմ**: Ի դեպ, Ալեք-պոլի հեղկոմը իրեն կոչելով Հայհեղկոմ, դրանով, թուրքերի դրդմամբ, փորձել է հակադրվել Ս. Կասյանի գլխավորած Հայհեղկոմին և իրեն ավելի բարձր դասել վերջինից՝ հպարտանալով, թե առաջինը իրենք են Հայաստանում խորհրդային իշխանություն հռչակել: Այստեղ էլ կարելի է նկատել թուրքերի խարդավանքը, ովքեր Հայաստանի խորհրդայնացումից հետո էլ փորձում էին Ալեքսանդրապոլի և Հայաստանի հեղկոմները հակադրել միմյանց և դրանից հավելյալ շահ կորզել:

Փաստորեն թուրքերի գիտությամբ Ալեքսանդրապոլում ստեղծված հեղկոմը իրենից ներկայացնում էր կառավարություն: Հեղկոմի նախագահ և ն. գ. կոմիսար էր նշանակվել **Մաթևոս Տեր-Գրիգորյանը (Արծվիկ)**, օգնականներ՝ Նահապետ Կուրդինյանը, Երվանդ Հայրապետյանը և Ներսիկ Ստեփանյանը, լուսավորության կոմիսար՝ Նուշիկ Զավարյանը, աշխատանքի և սոցապ. կոմիսար՝ Զարմայր Աշրաֆյանը, պարենավորման՝ Աղասի Մովսիսյանը, առողջապահության՝ Հայկ Զալադյանը, քաղաքի կոմիսար՝ Կ. Միրզոյանը, քաղաքային միլիցիայի պետ՝ Ս. Մատինյանը, գավառի կոմիսար՝ Ա. Վարոյանը և ուրիշներ¹¹:

Ալեքսանդրապոլի հեղկոմի, քաղկոմի և մյուս մարմինների բացահայտ թուրքասեր, ստորաքարշ գործելակերպի վերաբերյալ մայրաքաղաք հասած մտահոգիչ լուրերին ու տեղեկություններին իրազեկ լինելով է, որ Հայհեղկոմը 1920 թ. դեկտեմբերին Ալեքսանդրապոլի գավառ է գործուղել Հայչեկայի նախագահի տեղակալ Հայկ Ամատունուն: Նրան հանձնարարական էր տրված տեղում ուսումնասիրել վիճակը և համապատասխան քայլեր ձեռնարկել: Ի դեպ՝ բոլշևիկ Հ. Ամատունին քաջածա-

¹¹ Տե՛ս **Ալեքսանյան Կ.**, Ալեքսանդրապոլի գավառը թուրքական ռազմակալման ժամանակաշրջանում, ԲՀԱ, Եր., 2009, N 2, էջ 123:

նոր էր Ալեքսանդրապոլի իրադարձություններին դեռ 1920 թ. Մայիսյան խռովության շրջանից: Նա անձամբ մասնակից էր եղել մայիսյան դեպքերին, գտնվել էր «Վարդան գորավար» զբաղադնացքում: Սակայն խռովության պարտությունից հետո մեծ դժվարություններով ու զրկանքներով նրան հաջողվել էր Զավախքի վրայով փախչել Թիֆլիս: Հետագայում մայիսյան իրադարձությունների վերաբերյալ, սեփական դիտարկումների հիման վրա, նա զեկուցում էր պատրաստել¹²:

Հասնելով իր գործուղման վայր և տեղում ուսումնասիրելով քաղաքում և գավառում ստեղծված իրավիճակը՝ նա տագնապալի տեղեկություններ է հայտնում թուրքական զինվորական իշխանությունների գործադրած բռնությունների ու կողոպուտի և դրանց ձեռքին գործիք դարձած Ալեք-պոլի հեղկոմի մույթ գործերի մասին: Ըստ ամենայնի, Երևան հասած վարկաբեկիչ տեղեկությունների հիման վրա ՀԿ(բ)Կ ԿԿ-ի և Հայ-հեղկոմի հրահանգով 1921 թ. հունվարի 25-ին Ալեքսանդրապոլի հեղկոմը ինքնալուծարման դեկլարացիա հրապարակեց¹³, որով վերջ տրվեց նրա խայտառակ գործունեությանը:

Վավերագիր նյութերը ցույց են տալիս, որ Ալեքսանդրապոլի հեղկոմի լուծարումից հետո էլ Հ. Ամատունին շարունակել է գտնվել գավառում, ապրիլի վերջերին, թուրքերի հեռանալուց հետո անգամ ընդգրկված է եղել գավառի կազմում՝ իբրև անդամ: Մի տեղեկանքից իմանում ենք, որ 1921 թ. մայիսին նա վարել է Ալեք-պոլի շրջանային հեղկոմի և գ. վարիչի պաշտոնը¹⁴: Մեր ձեռքի տակ եղած փաստերը նաև ցույց են տալիս, որ Ալեք-պոլի հեղկոմի լուծարումից և գավառի ստեղծումից հետո էլ իրենց վարկաբեկած մի շարք նախկին հեղկոմականներ շարունակել են պաշտոնավարել և անգամ հասել են նրան, որ իրենց թույլ տված ապօրինությունների հետքերը կոծկելու նպատակով, ինչպես արդեն ասվեց՝ բանտարկել են տվել չեկիստ Հ. Ամատունուն: Ե՛վ սա այն դեպքում, երբ թուրքերը վաղուց՝ 1921 թ. ապրիլի 22-ից, դատարկել էին Ալեքսանդրապոլ քաղաքն ու գավառը:

Ստորև ներկայացվող Հ. Ամատունու ձեռքով Չեկայի բանտում մատիտով գրված երկու թերթ (4 էջ) ծավալով զեկուցումը պահվում է ՀԱԱ ՀՍԽՀ ներքին գործերի ժողկոմատի ֆոնդում (Ֆ. 116): Տեքստում արված ընդգծումները բնագրին են: Անհրաժեշտության դեպքում կատարվել են ուղղագրական և կետադրական որոշ շտկումներ: Տողատակում տրված են պարզաբանող մի քանի բացատրություններ: Փաստաթղթում, ըստ անհրաժեշտության, մեր խմբագրական հավելումների՝ կրճատված բառերը բացելու կամ կիսատ բառերը լրացնելու ընթացքում դրանք վերցրել ենք ուղղաձիգ՝ [] փակագծերի մեջ:

Արարատ Մ. Հակոբյան
Պատմ. գիտ. դոկտոր

12 Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 1022, ց. 2, գ. 136, թ. 5-12:

13 Տե՛ս «Կոմունիստ», Եր., 8 փետրվարի 1921 թ.:

14 Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 1:

INDICTMENT CONCERNING THE SCANDALOUS AFFAIRS OF REVOLUTIONARY COMMITTEE OF ALEXANDROPOL

Ararat M. Hakobyan

Key words – revolutionary committee, regional committee, extraordinary committee, policeman, committee of inquiry, prison, seizure, accusation, terrorist, robbery, bribery, assault, forgery

ОБВИНИТЕЛЬНЫЙ АКТ О СКАНДАЛЬНЫХ ДЕЛАХ РЕВКОМА АЛЕКСАНДРОПОЛЯ

Арарат М. Акопян

Ключевые слова – ревком, уездный комитет, чрезвычайная комиссия, милиционер, следственный комитет, тюрьма, изъятие, обвинение, террорист, ограбление, взятничество, нападение, подделывание

Հ.Խ.Ս.Հ.¹⁵. Ներքին գործոց ժողովրդական կոմիսար ընկ. Պողոս Մակինցյանին¹⁶

Զեկուցում

«Երբ 1920 թ. դեկտեմբերին խուլ շշուկներ հասան Երևան Ալեքսանդրապոլում ու նրա գավառում, իրանց կոմունիստ անւանող խմբակի ձեռքով կատարուող ապօրինությունների մասին, Հայաստանի Արտակարգ Ցանձնաժողովի որոշմամբ, որի փոխնախագահն էի, ճանապարհուցի Ալեքսանդրապոլ տեղնուտեղը պարզելու իրերի դրությունը և վերջ դնելու «թիրիմացություններին»:

Ալեք-պոլում կար մի խմբակ, որն իրան Նոյեմբերի 17-ից անւանել էր « Հ.Խ.Ս.Հ. Յեղկոմ» և գործել ու գործում էր իբրև այդպիսի իրաւասու մարմին: Նրա կազմի ու ենթաբաժինների մէջ էին մտնում մի շարք ըստ ամենայնի տհաս երեխաներ, ինչ-պէս.-Մաթէոս Տէր-Գրիգորեան, Ներսիկ [Ստեփանեան], Նուշիկ Զավարեան, [Գալանէ] Արէշեան, Արտյուշ Տէր-Մարտիրոսեան, Աւօ Ղազարեան, Նահապետ Կուրդի-նեան, Եան Ցալոյ, Գարեգին Թումանեան, Ռուբէն Խուրլարեան, Ալեքսան Գրիգորեան, [Զարմայր] Աշրաֆեան, Հայկ Յովակիմեան, այլ և կուսակցական գործիչներ՝ [Գևորգ] Գողթունի, [Թադևոս] Մանդալեան, Վահան Մանուկեան, [Արշալույս] Արշարունի, [Սուրեն] Արշակունի և այլն և այլն:

Տխրահռչակ Ռուշտի փաշայի «հաւանությամբ» խորհրդային կառավարութիւն յայտարարելով Ալեքսանդրապոլում, այդ Յեղկոմիստները դարձել էին Ազգային Մեծ ժողովի Արևելեան ճակատի հրամանատարութեան ներկայացուցչի հլու աշխատաւորները, նրա նենգ քաղաքականութեան իրականացնողները:

Այդ Յեղկոմը ապացուցելու համար Մարքեազ Կոմանդարին, որ իրանք խորհրդային և ոչ դաշնակցական կարգերի հետևողներ են, անլուր վայրագութեամբ թալանի էր մատնել թէ՛ պետական և թէ՛ մասնաւոր սեփականութիւնն ու կայքը. այսպէս ոչնչացել էին Մինֆինի հարուստ պահեստները, «Սագոյի» կարողութիւնը, քաղաքային պահեստները, կո[ո]պերատիւ խանութները և այլն, մկրտելով իրենց այդ Զուլուսական¹⁷ գործելակերպը «Ազգայնացում» տերմինով: Յափշտակել ու իւրացրել էր քաղաքացիների բացարձակ անհատական սեփականութիւնը՝ ոսկի,

15 Խորհրդային Հայաստանի պաշտոնական անվանումը ՀՍԽՀ էր:

16 Հայկ Ամատունին սույն զեկուցումը հասցեագրել է ն. գ. ժողկոմ Պ. Մակինցյանին, որովհետև այդ շրջանում (սկսած 1921 թ. մայիսի 21-ից, երբ ձևավորվեց ժողկոմխորհը) Արտակարգ հանձնաժողովը անմիջականորեն ենթարկվում էր ն. գ. ժողկոմատին: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 7: 17 Զուլուսները հարավ-աֆրիկյան Նաթալ նահանգի (Տրանսվալի շրջ.) կիսավայրենի ժողովուրդ (ցեղ) էին: Տե՛ս Հայաստանի սովետական հանրագիտարան, հատ.3, Եր., 1977, էջ 755:

արծաթ ակնեղէն, ալիւր, հացահատիկ, յուղ, պանիր, կարտոֆիլ, թօռու քեւալամ, խտտ, դարման և այլն, և այլն, ինչ հնարաւոր է անվանել **շարժական առարկայ**, բնորոշելով իրանց վարմունքը «պետական բռնագրաւում» անունով:

Ապացուցելու համար Ռուշտի փաշային, Արիֆ Բեյին կամ Օսման Նուրիին ու Թալաաթ Բեյին, թէ իրանք իրապէս «կոմունիստներ» են ու դաշնակցութիւնը հալածողներ, մի շարք ոճրագործ տիպերի ձեռքով բանտն ու Չեկայի պատուաւներն էին լցրել անմեղ ծերունիներ, կանանց, երեխաներ ... 60 տարեկան ծերունի Տեր-Արսէնը մեղադրում էր իբրև տերրորիստ, 58 տարեկան, 30 տարւա Հնչակեան յեղափոխական անցեալ ունեցող Յարութիւն Մահտեսի Նազարէթեանը (անդամալոյծ) ձերբակալած էր իբրև մաուզերիստ, 60 տարեկան հողագործ Գալո Մատոյեանը մեղադրում էր իբրև տերրորիստ, Մայիսեան դէպքերին Ղարսում դաշնակների ձեռքով խողխողած ընկ. Տէր-Գրիգորեանի անմխիթար այրին տնքում էր բանտում իբրև դաշնակցական, և այլն, և այլն անվերջ անուններ, բացարձակ անմեղութիւններ ... Հասարակութիւնը տեսնում, խում ու հեծում էր անձայն, լուռ ... ծպտուն, տրտունջ յայտնողը անմիջապէս Չեկայ կ'նետուեր, իսկ այնտեղ դժոխք էր: Երբ այցելեցի Չեկան, անձամբ տեսայ հողի տակից դուրս ցցւած Տէր-Արսէնի ալևոր արնոտ մորուքն ու փշուած ձեռքը, Եադեկի այլանդակված դէմքը, Տօնոյեանի ծակծկած-յոշոտւած կուրծքը ... Զ'կարողացան ներկայացնել ոչ բռնագրաւած գոյքի հաշիւը, ոչ իսկ գնդակահարւածների և կամ բանտարկւածների ցանկը: Այս ամենը կատարվել է Յեղկոմի սանկցիայով և գաւկոմի աչքի առաջ: Գնդակահարւածների, բանտարկւածների և մնացածների «բռնագրաւած» գոյքը մասամբ տաճիկ հրամանատարութեանն էր անցնում և մնացածը, ով դոչաղ էր, նրա գրպանն ու տունն էր լցում: Այնուհետև լսել կարելի է միայն բանտն ընկածներին տւած ինկիզիցիայի մասին, այդ ամենը ձևակերպւեց և հաստատուեց Հայաստանի Արտակարգ յանձնաժողովի կատարած քննութեամբ:

Այդ Յեղկոմի, գաւկոմի և այլ գործիչների ապշութեան շնորհիվ էր, որ Ռուշտի փաշան Ալեք-պօլում ձերբակալեց և Անգորա ուղարկեց իբրև պատերազմական գերիներ մոտ 1000 երիտասարդ:

Յեղկոմի լաբէյութեան շնորհիւ էր, որ Ա [լեք]-պօլից համարեա յուրաքանչիւր օր յանձնուում էր տաճիկ կառավարութեանը 100-ական տղամարդ, իբրև թե աշխատելու համար, և որոնք այդպէս էլ անհետ կորչում էին:

Այդ Յեղկոմն էր, որ Արիֆ Բեյի մտացածին ասկերի սպանութեան գործը շտկելու համար և Մաթէոս Տեր-Գրիգորեանին փրկելու համար Ռուշտի փաշայի ձեռքը յանձնեց 10 անմեղ միլիցիոներներ, որոնց յետոյ բանտից փրկեց դրամանենգ Մատինեանը:

Այդ Յեղկոմն էր, որ յուր նախագահի վարկը ամրացնելու համար ժողովրդից թալանած 17 բրիլլիանտը իւր անդամ Նահապետ Կուրդինեանի ստորագրութիւնը կրող պաշտօնական գրութեամբ «ընծայ ուղարկեց Արիֆ Բեյին Յեղկոմի կողմից»:

Այդ Յեղկոմն էր, որ անպարտ քաղաքացի Լևոն Գէօղակեանին իբրև ասկերի սպանիդի պաշտօնական գրութեամբ Մարքեազ Կոմանդարին յանձնեց, որը սակայն ծաղրելով Յեղկոմը, անմեղ յայտարարեց Գէօղակեանին:

Այդ Յեղկոմի նախագահ Մաթէոսն էր, որ իւր աչքերի առաջ խողխողել տւեց միլիցիոներ Արմենակին, սակայն ինքը փախաւ առանց բողոքի, առանց հարց բարձրացնելու:

Մեղադրանքներն իրոք կշիռ ունեցող և բազմաթիւ են, սակայն ինձ գրկեցին հնարաւորութիւնից, դիտմամբ գրկեցին իրանց կեանքը փրկելու համար: Չէ որ Ես էի պատճառը, որ ներկայիս, անցեալ Յեղկոմի ու գործիչների չարագործութիւնների մասին կուտակւած մատերիալը քննելու պահանջ դրի քննիչ յանձնաժողով ընտրել ու ինքս եղայ ընտրւածներից մեկը: Չէ որ Ես իմ անձնական ինիցիատիւայով¹⁸ կազմեցի 5 հոգուց մի ուրիշ յանձնաժողով մի ուրիշ խմբակի չարագործութիւնները պարզելու համար գաւառում: Չէ որ իմ բռնած ուղիղ գիծը պարզ էր ամենին, պարզ էր նաև ժողովրդի հաւատն ու յարգանքը դէպի ինձ, իսկ աղճատւած, կեղտոտւած անցեալի տէր հերոսները ոչ միայն դեռ շարունակում էին կուսակցու-

18 Նախաձեռնությամբ:

ԱՌԵՎ
Է (ԺԳ) քաղի, թիվ 1 (49) հունվար-մարտ, 2015
ՎԷՆ համահայկական հանդես

թեան շարքերում գտնել, այլև պատասխանատու պաշտոններ են վարում: Ես ոչ մի վայրկեան չէի կասկածում սկսածս գործի իրաւութեան և հետ[ե]վանքի մասին: Փոքրիկ մարդիկ ուրիշ միջոց չունէին, բացի չեկայի բանտը, ուր խոթեցին ինձ տխմար գրպարտութիւն բարդելով հասցեիս, սակայն ապուշները այդ գրպարտութիւնը իրանց դեմ գործիք դարձրին, որովհետև կրքոտ ձևով տարուող քննութիւնն իսկ երևան հանեց ճշմարտութիւնն յուր ամբողջ մերկութեամբ:

Սակայն դեռ էլի շարունակում են ինձ բանտում պահել. ինչու՞, ես կասեմ, որովհետև վախենում են, որ «У каждого из них было в пуху».¹⁹ Այդ մարդուկները էլի չեն հանգստանայ, եթէ յաջողւի նրանց ինձ Ալեք-պօլից, նոյն իսկ Հայաստանի սահմաններից դուրս վտարել, որովհետև նրանք շատ լաւ գիտեն, որ իրենց յանցանքները ծաղկող խարազանը իմ ձեռքում շատ երկար է: Գաւկոմում նստած ընկերներից ոմանք **նոյն վախն ունեն**, որովհետև գիտեն, որ **ինձ** հայտնի է նրանց մասնակցութիւնը [Սերգեյ] Մատինեանի դրամանենգութեան մէջ. ավելին կասեմ, փետուրարեան գաւկոմի անդամներ Գողթունու, Արշարունու և Մանդալեանի կողմից նշանակւած կօնտրօլիորը²⁰ (կեղծ չեկեր տպելու գործին հսկելու համար) Վահան Մանուկեանը, նոյնիսկ տպված թղթադրամներից մի խոշոր կուշ²¹ էր գրպանել, սակայն գործը բացվելուն պես ստիպւած էր վերադարձնել: Ի դէպ ասեմ, որ Մատինեանի գործի քննութիւնը վերին ծայր միակողմանի է տարւում: Ես ասել եմ ու կրկնում եմ, որ Մատինեանի պրոցեսը Ալեք-պօլի 5 ամսեայ կեանքի պատկերն է ներկայացնելու իւր տիպիկ դերակատարներով, սակայն ոմանց փրկելու համար այդ գործը շեղեցին իր ուղիից ու այժմ էլ շտապ պատրաստութիւն են տեսնում մի երկուսի կեանքի գնով, «Լետայի»²² սեփականութիւն դարձնել մեծամասնութեան ստորութիւնն ու չարագործութիւնները: Թոււմ էր, թէ ես անաչառ վերաբերմունքի կարող պիտի լինէի սպասել նախյեղկոմ Սերո Մանուցեանից²³: Սակայն ճակատագրական յաջողութիւն ունիմ ես յանցաւորներ գտնելու գործում: Բանտարկութեանս հենց առաջի ժամերին պատահմամբ իմացայ ընկ. Միխայիլ Ստեփանեանից, որ Մանուցեանը 30.000.000 պետական դրամներով մի շատ խորամանկ և օյինբազ սպեկուլեացիա է արել. ու չ'լսեցի այդ դէպքում իսկ. ինչ արած որ մի նոր թշնամի էլ կունենամ, հոգ չէ, միայն ճշմարտութիւնը չ'կորչի: Ընկ. Մակինցեան, [մ]եր պարտականութիւն է այժմ չ'խնայել միջոց յանցանքը պարզելու և յանցաւորները պատժելու: Համոզեցէք, որ մեր այս խուլ անկիւններում է խորհրդային իշխանութեան վարկը և յաջողութիւնը տնօրինւում»:

04 / 07 1921թ. Հ. Ամատունի
/ստորագրութիւն/

ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 311, թ. 129 – 130:

19 Ռուսական ասույթ է, որը թարգմանաբար կնշանակի՝ «Նրանցից յուրաքանչյուրը մեղքի իր բաժինն ունի»:

20 Վերահսկիչ:

21 Կլոր աման: Տե՛ս **Աղայան Է.Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Ա-Ձ, Եր., 1976, էջ 783:

22 Հունական դիցաբանության մեջ՝ մոռացության գետը ստորերկրյա աշխարհում, այլ կերպ՝ մոռացության մատնվել: Տե՛ս **Աղայան Է.Բ.**, նշվ. աշխ., էջ 526:

23 ՀԿ(Բ)Կ ԿԿ-ի 1921 թ. մայիսյան պլենումով Մանուցեանը նշանակվել էր Ալեք-պոլի գավիեղկոմի նախագահ: Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, գ. 1, գ. 39, թ. 5: